

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը եւ Հնդկաստանի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր, ցանկանալով բարենպաստ պայմաններ ստեղծել մի Կողմի ներդրողների կողմից մյուս Կողմի տարածքում ներդրումներ կատարելու համար, ընդունելով, որ միջազգային համաձայնագրով ներդրումների խրախուսումը եւ փոխադարձաբար պաշտպանությունը կնպաստեն անհատական գործարարության խթանմանը եւ կբարձրացնեն երկու պետությունների բարգավաճումը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈՂՎԱԾ 1 Սահմանումներ

Սույն Համաձայնագրի նպատակների համար՝

1. "Շնկերություններ" տերմինի տակ հասկացվում են Պայմանավորվող կողմերի ցանկացած տարածքում համաձայն գործող օրենքի կազմավորված կամ հիմնադրված կորպորացիաները, ձեռնարկությունները եւ ընկերակցությունները:
2. "Ներդրումներ" տերմինի տակ հասկացվում են հիմնադրված կամ ձեռք բերված գույքի բոլոր տեսակները, ներառյալ այդպիսի ներդրումների ձեւերի փոփոխությունները՝ համաձայն այն Պայմանավորվող կողմի ազգային օրենքների, որոնց տարածքում կատարվել են ներդրումները, եւ մասնավորապես, սակայն ոչ բացառապես, ներառում են.
 - ա) շարժական եւ անշարժ գույքը, ինչպես նաեւ այլ գույքային իրավունքները, ինչպիսիք են վարձակալումները, գրավը կամ գրավականը,
 - բ) ընկերության բաժնեմասերը, բաժնետոմսերը եւ պարտատոմսերը եւ ձեռնարկությունում այլ նման տեսակի մասնակցությունը,
 - գ) պայմանագրի հիման վրա առկա դրամական պահանջները կամ պայմանագրից բխող ցանկացած պարտավորություն, որը ունի ֆինանսական արժեք,
 - դ) մտավոր սեփականության իրավունքները՝ համաձայն համապատասխան Պայմանավորվող կողմի գործող օրենքների,
 - ե) օրենքով կամ պայմանագրով տրամադրված գործարար կոնցեսիաները՝ ներառյալ նավթի եւ այլ պաշարների հետազոտման եւ արդյունահանման իրավունքները:
3. "Ներդրողներ" տերմինը յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի դեպքում ընդգրկում է ստորեւ բերվող սուբյեկտները, որոնք ներդրում են կատարում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում համաձայն վերջինիս օրենքների եւ սույն Համաձայնագրի դրույթների.
 - ա) ցանկացած ֆիզիկական անձ, որը հանդիսանում է որեւէ պայմանավորվող կողմի քաղաքացի՝ համաձայն վերջինիս օրենքների, կամ
 - բ) ցանկացած իրավաբանական անձ, ինչպիսիք են՝ ընկերությունը, կորպորացիան, ձեռնարկությունը, ընկերակցությունը, որոնք կազմավորվել կամ հիմնադրվել են համաձայն մի Պայմանավորվող կողմի օրենսդրության եւ ունեն իրենց գրանցված գրասենյակը այդ Պայմանավորվող կողմի տարածքում:
4. "Եկամուտներ" տերմինի տակ հասկացվում են ներդրումներից ստացված դրամական միջոցները, ինչպիսիք են շահույթը, տոկոսադրույքը, կապիտալի աճը, շահաբաժինները, ռոյալթիները եւ այլ վճարները:
5. "Տարածք" տերմինի տակ հասկացվում է.
 - ա) Հայաստանի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության տարածքը:
 - բ) Հնդկաստանի դեպքում՝ Հնդկաստանի Հանրապետության տարածքը, ներառյալ նրա տարածքային ջրերը եւ օդային տարածքը, նաեւ՝ ծովին հարակից ցանկացած տարածք, ներառյալ բացառիկ տնտեսական գոտին եւ մայրցամաքային շելֆը, որի նկատմամբ

Հնդկաստանի Հանրապետությունն ունի ինքնիշխանություն, ինքնիշխան իրավունքներ եւ բացառիկ իրավասություն՝ համաձայն իր գործող օրենքների, 1982 թ. ՄԱԿ-ի Ծովային իրավունքի կոնվենցիայի եւ Միջազգային իրավունքի:

ՀՈՂՎԱԾ 2 Համաձայնագրի առարկան

Սույն Համաձայնագիրը կիրառվում է յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի ներդրողների կողմից իրականացված բոլոր ներդրումների նկատմամբ՝ համաձայն գործող օրենսդրության անկախ նրանից՝ դրանք կատարվել են մինչեւ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելը, թե դրանից հետո:

ՀՈՂՎԱԾ 3 Ներդրումների խթանումը եւ պաշտպանությունը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է խրախուսի եւ բարենպաստ պայմաններ ստեղծի մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների համար՝ իր տարածքում ներդրումներ կատարելու համար, եւ ընդունի այդպիսի ներդրումները՝ համաձայն իր օրենքների ու քաղաքականության:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի ներդրումների եւ ներդրողների եկամուտների նկատմամբ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում պետք է մշտապես կիրառվի հավասար եւ արդար ռեժիմ:

ՀՈՂՎԱԾ 4 Ազգային եւ առավել բարենպաստության ռեժիմ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումներին տրամադրի այնպիսի ռեժիմ, որը ոչ պակաս բարենպաստ է, քան այն ռեժիմը, որը տրամադրում է իր կամ ցանկացած երրորդ պետության ներդրողների ներդրումներին:

2. Ի լրումն, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է մյուս Պայմանավորվող կողմի ներդրողներին, ներառյալ նրանց ներդրումներից ստացվող եկամուտները, տրամադրի այնպիսի ռեժիմ, որը ոչ պակաս բարենպաստ է, քան այն ռեժիմը, որը տրամադրում է ցանկացած երրորդ պետության ներդրողներին:

3. Սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները չպետք է մեկնաբանվեն որպես պարտավորեցնող մի Պայմանավորվող կողմին՝ տարածելու մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների վրա ցանկացած ռեժիմի շահավետությունը, առավելությունները եւ արտոնությունները, որոնք արդյունք են.

ա) ցանկացած առկա կամ հետագայում կազմավորվելիք ազատ առևտրի գոտու, մաքսային միության, արժույթային միության կամ նմանատիպ միություններ հիմնող այլ միջազգային համաձայնագրի կամ տարածաշրջանային համագործակցության այլ ձևերի, որոնց Պայմանավորվող կողմերից որեւէ մեկը անդամակցում է կամ կարող է անդամակցել,

բ) գլխավորապես կամ ամբողջապես հարկմանը վերաբերող ցանկացած հարցի:

ՀՈՂՎԱԾ 5 Օտարում

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումները մյուս Պայմանավորվող կողմի տարածքում չպետք է օտարվեն, ազգայնացվեն կամ ենթարկվեն այլ միջոցների, որոնք համարժեք են օտարմանը կամ ազգայնացմանը (այսուհետ՝ օտարում), բացառությամբ այն դեպքերի, երբ օտարումը բխում է հասարակության կարիքներից, իրականացվում է առանց խտրականության, համաձայն օրենքի եւ փոխհատուցման վճարմամբ՝ ընդունող երկրի օրենսդրության համապատասխան: Նման փոխհատուցումը պետք է համարժեք լինի օտարման ենթարկված ներդրումների իրական

արժեքին, օտարումից կամ նախատեսվող օտարումը հանրորեն հայտնի դառնալուց անմիջապես առաջ, կախված այն հանգամանքից, թե որն է ավելի շուտ եղել. փոխհատուցումը, մինչև վճարման օրը, պետք է ներառի նպաստավոր տոկոսադրույք, պետք է վճարվի առանց անհիմն ուշացման, լինի արդյունավետորեն իրացվելի եւ ազատ փոխանցելի:

2. Այն ներդրողը, որի ներդրումները օտարվում են, համաձայն օտարումն իրականացնող Պայմանավորվող կողմի օրենսդրության, պետք է իրավունք ունենա իր գործի եւ իր ներդրումների գնահատման վերանայման այդ կողմի դատական կամ այլ անկախ մարմնի կողմից՝ համաձայն սույն կետում սահմանված սկզբունքների: Օտարումն իրականացնող Պայմանավորվող կողմը պետք է ձեռնարկի բոլոր միջոցները՝ երաշխավորելու համար, որ նման վերանայումը հնարավորինս շուտ կիրականացվի:

3. Երբ Պայմանավորվող կողմը օտարման է ենթարկում որեւէ ընկերության ակտիվները, որը հիմնադրվել կամ կազմավորվել է իր տարածքում գործող օրենքների համաձայն, եւ որում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողներն ունեն բաժնետոմսեր, պետք է երաշխավորվի, որ սույն հոդվածի 1-ին կետի դրույթները անհրաժեշտության չափով կկիրառվեն՝ երաշխավորելու համար փոխհատուցման արդար եւ հավասար վճարումը մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների դիմաց, որոնք այդ բաժնետոմսերի սեփականատերերն են:

Ծանոթություն. սույն Համաձայնագրի նպատակների համար "օտարում" բառը կունենա "սեփականագրվում" կամ "ազգայնացում" բառերի իմաստը:

ՀՈՂՎԱԾ 6

Վնասների փոխհատուցումը

Մի Պայմանավորվող կողմի ներդրողներին, որոնց ներդրումները մյուս Պայմանավորվող կողմի տարածքում վնասներ են կրում պատերազմի կամ այլ զինված ընդհարման, արտակարգ իրավիճակների կամ քաղաքացիական անկարգությունների հետեւանքով, կապված վնասների վերականգնման, փոխհատուցման կամ այլ կարգավորման հետ, վերջին Պայմանավորվող կողմը կտրամադրի այնպիսի ռեժիմ, որը կլինի ոչ պակաս բարենպաստ, քան այն ռեժիմն է, որը վերջին Պայմանավորվող կողմը տրամադրում է սեփական կամ երրորդ երկրի ներդրողներին: Առաջացող վճարումները պետք է լինեն ազատ փոխանցելի:

ՀՈՂՎԱԾ 7

Ներդրումները եւ եկամուտները հայրենիք վերադարձնելը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կթույլատրի մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների բոլոր դրամական միջոցների, որոնք կապված են իր տարածքում կատարված ներդրումների հետ, ազատ փոխանցումը՝ առանց անհիմն ուշացումների ու խտրականության: Այդպիսի դրամական միջոցները կարող են ներառել.

ա) ներդրումների պահպանմանն ու ընդլայնմանն ուղղված կապիտալը եւ լրացուցիչ գումարները,

բ) գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթը, ներառյալ շահաբաժինները եւ բաժնեմասերին համապատասխան տոկոսադրույքը,

գ) ներդրման հետ կապված ցանկացած փոխառության՝ ներառյալ տոկոսների մարումը,

դ) ներդրման հետ կապված ռոյալթիների եւ ծառայությունների գումարների վճարումը,

ե) իրենց բաժնեմասերի վաճառքից ստացված գումարները,

զ) ներդրումների մասնակի կամ ամբողջական վաճառքի կամ լուծարման արդյունքում ստացված գումարները,

է) մի Պայմանավորվող կողմի այն քաղաքացիների վարձատրությունը, որոնք, ներդրման հետ կապված, աշխատում են մյուս Պայմանավորվող կողմի տարածքում:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չպետք է խոչընդոտեն սույն

Համաձայնագրի 6-րդ հոդվածով նախատեսված որել է փոխհատուցման փոխանցման:

3. Կողմերի միջև այլ համաձայնության բացակայության դեպքում սույն հոդվածի 1-ին կետով սահմանված արժույթի փոխանցումները պետք է թույլատրվեն այն արժույթով, որով իրականացվել է ներդրումը, կամ այլ փոխարկելի արժույթով: Այդպիսի փոխանցումը պետք է իրականացվի փոխանցման օրը գերակշռող՝ շուկայական փոխանակման տոկոսադրույքով:

ՀՈԴՎԱԾ 8 Սուբրոգացիա

Եթե մի Պայմանավորվող կողմը կամ նրա լիազոր գործակալությունը երաշխավորվում է ոչ առելուրային ռիսկի դիմաց փոխհատուցում վճարել իր ցանկացած ներդրողի ներդրումների համար, որոնք իրականացվել են մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, եւ սույն Համաձայնագրի ներքո այդպիսի ներդրողի պահանջներին համապատասխան փոխհատուցում է վճարում, ապա մյուս Պայմանավորվող կողմը կճանաչի սուբրոգացիայի իրավունքով այդ ներդրողի իրավունքների եւ պահանջների պաշտպանության փոխանցումը առաջին Պայմանավորվող կողմին կամ լիազոր գործակալությանը: Սուբրոգացիայի իրավունքով փոխանցված իրավունքները եւ պահանջները չպետք է գերազանցեն այդպիսի ներդրողների սկզբնական իրավունքները պահանջները:

ՀՈԴՎԱԾ 9 Պայմանավորվող կողմի եւ ներդրողի միջև ներդրումային վեճերի կարգավորումը

1. Ցանկացած վեճ մի Պայմանավորվող կողմի ներդրողի եւ մյուս Պայմանավորվող կողմի միջև, կապված սույն Համաձայնագրի համաձայն առաջինի կատարած ներդրման հետ, հնարավորության սահմաններում կկարգավորվի բարեկամաբար՝ վեճին մասնակից կողմերի բանակցությունների միջոցով:

2. Ցանկացած նման վեճ, որը բարեկամաբար չի կարգավորվի վեճ ամսվա ընթացքում, երկու կողմերի համաձայնության դեպքում կարող է ներկայացվել դիտարկման.

ա) ներդրումն ընդունած Պայմանավորվող կողմի օրենսդրության համաձայն՝ այդ Պայմանավորվող կողմի իրավասու դատական կամ վարչական մարմին՝ վճիռ կայացնելու նպատակով, կամ՝

բ) միջազգային հաշտեցման՝ համաձայն ՄԱԿ-ի Միջազգային առելուրային իրավունքի հանձնաժողովի հաշտեցման Կանոնների:

3. Եթե կողմերին չի հաջողվում վեճի հաշտեցման ընթացակարգի շուրջ համաձայնություն ձեռք բերել ըստ սույն հոդվածի 2-րդ կետի, կամ եթե վեճը ներկայացվել է հաշտեցման, սակայն հաշտեցման գործընթացն ավարտվել է այլ կերպ, քան հաշտեցման համաձայնագրի ստորագրումն է, վեճը կարող է ներկայացվել Միջնորդ դատարան: Միջնորդ դատարանի ընթացակարգը պետք է լինի հետեւյալը.

ա) եթե ներդրում կատարած Պայմանավորվող կողմը եւ մյուս Պայմանավորվող կողմը 1965 թվականի՝ "Պետությունների եւ այլ պետությունների քաղաքացիների միջև ներդրումային վեճերի կարգավորման" կոնվենցիայի մասնակից են, եւ ներդրողը գրավոր համաձայնում է վեճը ներկայացնել ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոն, վեճը պետք է փոխանցվի Կենտրոն, կամ

բ) եթե վեճին մասնակից երկու կողմերն էլ համաձայն են՝ Հաշտեցման լրացուցիչ կանոնների, Միջնորդ դատարանի եւ Փաստի բացահայտման ընթացակարգերի ներքո, կամ

գ) ad hoc միջնորդ դատարանին՝ վեճին մասնակից կողմերից յուրաքանչյուրի կողմից, համաձայն ՄԱԿ-ի 1976 թվականի Միջազգային առելուրային իրավունքի հանձնաժողովի միջնորդ դատարանի Կանոնների՝ ըստ հետեւյալ փոփոխությունների.

- Կանոնների 7-րդ հոդվածի համաձայն՝ նշանակումներ կատարող մարմինը պետք է լինի Նախագահը, Փոխնախագահը կամ Միջազգային դատարանի՝ ավագությամբ հաջորդ դատավորը, որը չպետք է լինի Պայմանավորվող կողմերից որել է մեկի քաղաքացի:

Երրորդ դատավորը չպետք է լինի Պայմանավորվող կողմերից որեւէ մեկի քաղաքացի:

- Կողմերը երկու ամսվա ընթացքում պետք է նշանակեն իրենց համապատասխան իրավաբաններին:

- Արբիտրաժային վճիռը պետք է կայացվի սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան եւ պետք է պարտավորեցնի վիճող կողմերին:

- Միջնորդ դատարանը պետք է հաստատի իր կայացրած որոշման հիմքը եւ հիմնավորումներ տրամադրի՝ որեւէ կողմի պահանջով:

ՀՈԴՎԱԾ 10

Պայմանավորվող կողմերի միջեւ վեճերը

1. Պայմանավորվող կողմերի միջեւ սույն Համաձայնագրի մեկնաբանմանը կամ կիրառմանը վերաբերող վեճերը հնարավորության սահմաններում պետք է կարգավորվեն բանակցությունների միջոցով:

2. Եթե պայմանավորվող կողմերի միջեւ վեճը չի կարգավորվում բանակցությունների միջոցով վեճի ծագման օրվանից վեց ամսվա ընթացքում, այն, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի պահանջով, պետք է ներկայացվի միջնորդ դատարանին:

3. Յուրաքանչյուր մասնավոր դեպքի համար այդպիսի միջնորդ դատարանը կստեղծվի հետեւյալ կերպ: Վեճի կարգավորման համար պահանջագրի ստացումից հետո երկու ամսվա ընթացքում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է նշանակի դատարանի մեկ անդամի (իրավաբարի): Այս երկու անդամները ընտրում են երրորդ երկրի քաղաքացու, որը, երկու Պայմանավորվող կողմերի համաձայնությամբ, կնշանակվի դատարանի Նախագահ: Նախագահը պետք է նշանակվի մյուս երկու իրավաբանների նշանակման օրվան հաջորդող երկու ամսվա ընթացքում:

4. Եթե սույն հոդվածի 3-րդ կետում սահմանված ժամանակահատվածում անհրաժեշտ նշանակումները չեն կատարվում, Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը, այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, նշանակումներն իրականացնելու համար կարող է հրավիրել Միջազգային դատարանի նախագահին: Եթե նախագահը հանդիսանում է Պայմանավորվող կողմերից որեւէ մեկի քաղաքացի կամ որեւէ այլ պատճառով չի կարողանում իրականացնել նշված գործառույթը, ապա նշանակումներն իրականացնելու համար հրավիրվում է փոխնախագահը: Եթե փոխնախագահը նույնպես որեւէ պատճառով չի կարողանում իրականացնել նշված գործառույթը, ապա նշանակումներն իրականացնելու համար հրավիրվում է Միջազգային դատարանի ավագությամբ հաջորդ անդամը, որը չի հանդիսանում Պայմանավորվող կողմերից որեւէ մեկի քաղաքացի:

5. Միջնորդ դատարանն իր որոշումը ընդունում է ձայների մեծամասնությամբ: Այդպիսի որոշումը պարտադիր Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի համար: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կրում է իր կողմից նշանակված իրավաբարի եւ դատական գործընթացում իր ներկայացուցչության հետ կապված բոլոր ծախսերը: Նախագահի եւ մյուս այլ ծախսերը Պայմանավորվող կողմերը կրում են հավասարապես: Միջնորդ դատարանը կարող է, այնուամենայնիվ, որոշել, որ ծախսերի գերակշռող մասը կրելու է Պայմանավորվող կողմերից մեկը, եւ այդպիսի որոշումը պարտադիր է յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի համար: Միջնորդ դատարանն ինքն է սահմանում իր գործունեության ընթացակարգը:

ՀՈԴՎԱԾ 11

Անձնական մուտքը եւ ժամանակավոր բնակությունը

Պայմանավորվող կողմը, համաձայն այլ պետությունների քաղաքացիների մուտք գործելու եւ ժամանակավոր բնակություն հաստատելու վերաբերյալ օրենքների, պետք է թույլատրի մյուս Պայմանավորվող կողմի այն ֆիզիկական անձանց եւ անձնակազմի մուտք գործելը եւ բնակվելը իր տարածքում, որոնք վարձվել են՝ ներդրումների հետ կապված գործունեություն իրականացնելու համար:

ՀՈՂՎԱԾ 12
Կիրառման ենթակա օրենքները

1. Եթե սույն Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, ապա բոլոր ներդրումները պետք է իրականացվեն այն Պայմանավորվող կողմի գործող օրենսդրության համապատասխան, որի տարածքում այդ ներդրումները կատարվել են:
2. Անկախ սույն հոդվածի 1-ին կետից՝ սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է խոչընդոտի ներդրումներն ընդունող Պայմանավորվող կողմին՝ առանց խտրականության իրականացնել գործողություններ՝ ուղղված իր անվտանգության ապահովմանը, կամ՝ արտակարգ իրավիճակներում պայմանավորված գործողություններ՝ համաձայն խելամտորեն եւ պատշաճորեն կիրառված օրենքների:

ՀՈՂՎԱԾ 13
Այլ կանոնների կիրառումը

Եթե որեւէ Պայմանավորվող կողմի օրենքի դրույթները կամ ներկայումս գործող միջազգային իրավունքի պարտավորությունները կամ, ի լրումն սույն Համաձայնագրի, Պայմանավորվող կողմերի միջեւ սահմանվելիք պարտավորությունները կպարունակեն ընդհանուր կամ առանձնահատուկ կանոններ, որոնք մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի ներդրումներին կտրամադրեն առավել բարենպաստ ռեժիմ, քան սահմանված է սույն Համաձայնագրով, ապա այդպիսի կանոնները կգերակայեն սույն Համաձայնագրի նկատմամբ առավել բարենպաստության մասով:

ՀՈՂՎԱԾ 14
Լրացումներ եւ փոփոխություններ

Պայմանավորվող կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են սույն Համաձայնագրում կատարել փոփոխություններ կամ լրացումներ: Փոփոխությունները կամ լրացումները կծեւակերպվեն լրացուցիչ արձանագրություններով եւ սույն Համաձայնագրի 15-րդ հոդվածով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո կհանդիսանան սույն Համաձայնագրի բաղկացուցիչ եւ անբաժանելի մասը:

ՀՈՂՎԱԾ 15
Համաձայնագրի ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա համար անհրաժեշտ՝ Պայմանավորվող կողմերի ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին ծանուցման ստացման օրվանից երեսուն /30/ օր հետո:

ՀՈՂՎԱԾ 16
Գործողության ժամկետը եւ դադարեցումը

1. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կմնա տասը տարի եւ այնուհետեւ ենթադրվում է դրա ինքնաբերաբար երկարաձգումը մինչեւ Պայմանավորվող կողմերից մեկը գրավոր կծանուցի մյուսին Համաձայնագիրը դադարեցնելու մտադրության մասին: Նման գրավոր ծանուցումը ստանալու օրվանից մեկ տարի հետո Համաձայնագիրը կդադարի գործել:
2. Եթե սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցվի, համաձայն սույն հոդվածի 1-ին կետի, Համաձայնագիրը կշարունակի ուժի մեջ մնալ գործողության դադարեցման օրվան հաջորդող տասնհինգ տարվա ընթացքում այն ներդրումների նկատմամբ, որոնք իրականացվել կամ ձեռք են բերվել սույն Համաձայնագրի դադարեցման օրվանից առաջ:
3. Ի վկայություն վերոնշյալի՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճորեն լիազորված իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Նյու Դելի քաղաքում, 2003 թվականի մայիսի 23-ին, երկու թևերինակով, յուրաքանչյուրը հայերեն, հնդկերեն եւ անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ ծագած տարաձայնությունների դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2006 թ. մայիսի 30-ից:

ՀՀԱԳՆՊՏ 2006/ 8(16), ԵՄՊ, 28.12.05, անգլերեն բաժին, հոդ. 14

AGREEMENT

Between the Government of the Republic of Armenia and the Government of Republic of India for the promotion and protection of investments

The Government of the Republic of Armenia and the Government of Republic of India (hereinafter referred to as the "Contracting Parties");
Desiring to create conditions favourable for fostering greater investment by investors of one State in the territory of the other State;
Recognising that the encouragement and reciprocal protection under International agreement of such investment will be conducive to the stimulation of individual business initiative and will increase prosperity in both States;

Have agreed as follows:

Article 1 Definitions

For the purposes of this Agreement:

(1) "Companies" means corporations, firms and associations incorporated or constituted or established under the law in force in any part of the Contracting Parties.

(2) "investment" means every kind of asset established or acquired including changes in the form of such investment, in accordance with the national laws of the Contracting Party in whose territory the investment is made and in particular, though not exclusively, includes:

(i) movable and immovable property as well as other property rights such as mortgages, liens or pledges;

(ii) shares in and stock and debentures of a company and any other similar forms of participation in a company;

(iii) rights to money or to any performance under contract having a financial value;

(iv) intellectual property rights, in accordance with the relevant laws of the respective Contracting Party;

(v) business concessions conferred by law or under contract, including concessions to search for and extract oil and other minerals;

(3) "investors" means for either Contracting Party, the following subjects who invest in the territory of the other Contracting Party in accordance with the laws of the latter Contracting Party and the provisions of this Agreement.

(i) any natural person who is a citizen of either Contracting Party in accordance with its laws; or

(ii) any legal person such as company, corporation, firm, association incorporated or constituted in accordance with the laws and regulations of one of the Contracting Parties and having its registered office in the territory of that Contracting Party.

(4) "returns" means the monetary amounts yielded by an investment such as profit, interest, capital gains, dividends, royalties and fees;

(5) "territory" means:

(a) in respect of Armenia: the territory of the Republic of Armenia.

(b) in respect of India: the territory of the Republic of India including its territorial waters and the airspace above it and other maritime zones including the Exclusive Economic Zone and continental shelf over which the Republic of India has sovereignty, sovereign rights or exclusive jurisdiction in accordance with its laws in force, the 1982 United Nations Convention on the Law of the Sea and International Law.

Article 2 Scope of the Agreement

This Agreement shall apply to all investments made by investors of either Contracting Party, accepted as such in accordance with its laws and regulations, whether made before or after the coming into force of this Agreement.

Article 3 Promotion and Protection of Investment

(1) Each Contracting Party shall encourage and create favourable conditions for investors of the other Contracting Party to make investments in its territory, and admit such investments in accordance with its laws and policy.

(2) Investments and returns of investors of each Contracting Party shall at all times be accorded fair and equitable treatment in the territory of the other Contracting Party.

Article 4 National Treatment and Most-Favoured-Nation Treatment

(1) Each Contracting Party shall accord to investments of investors of the other Contracting Party, treatment which shall not be less favourable than that accorded either to investments of its own or to investments of investors of any third State.

(2) In addition, each Contracting Party shall accord to investors of the other Contracting Party, including in respect of returns on their investments, treatment which shall not be less favourable than that accorded to investors of any third State.

(3) The provisions of paragraphs (1) and (2) above shall not be construed so as to oblige one Contracting Party to extend to the investors of the other the benefit of any treatment, preference or privilege resulting from:

(a) any existing or future free trade area, customs unions, monetary union or similar international agreement or other forms of regional cooperation to which one of the Contracting Parties is or may become a party, or

(b) any matter pertaining wholly or mainly to taxation.

Article 5 Alienation

(1) Investments of investors of either Contracting Party shall not be

alienated, nationalized, expropriated or subjected to measures having effect equivalent to alienation, nationalization or expropriation (hereinafter referred to as "Alienation") in the territory of the other Contracting Party except for a public purpose, in non-discriminatory manner, under due process of law and against payment of compensation according to the host country legislation. Such compensation shall amount to the genuine value of the investment alienated immediately before the alienation or before the impending alienation became public knowledge, whichever is the earlier, shall include interest at a fair and equitable rate until the date of payment shall be made without unreasonable delay, be effectively realizable and be freely transferable.

(2) The investor affected shall have right, under the law of the Contracting Party making the alienation, to review, by a judicial or other independent authority of that Party, of his or its case and of the valuation of his or its investment in accordance with the principles set out in this paragraph. The Contracting Party making the expropriation shall make every endeavor to ensure that such review is carried out promptly.

(3) Where a Contracting Party expropriates the assets of a company which is incorporated or constituted under the law in force in any part of its own territory, and in which investors of the other Contracting Party own shares, it shall ensure that the provisions of paragraph (1) of this Article are applied to the extent necessary to ensure fair and equitable compensation in respect of their investment to such investors of the other Contracting Party who are owners of those shares.

Explanation: For the purpose of this Agreement, the word "alienation" shall have the same meaning as "expropriation" or "nationalization".

Article 6 Compensation for Losses

Investors of one Contracting Party whose investments in the territory of the other Contracting Party suffer losses owing to war or other armed conflict, a state of national emergency or civil disturbances in the territory of the latter Contracting Party shall be accorded by the latter Contracting Party treatment, as regards restitution, indemnification, compensation or other settlement, no less favourable than that which the latter Contracting Party accords to its own investors or to investors of any third State. Resulting payments shall be freely transferable.

Article 7 Repatriation of Investment and Returns

(l) Each Contracting Party shall permit all funds of an investor of the other Contracting Party related to an investment in its territory to be freely transferred without unreasonable delay and on a non-discriminatory basis. Such funds may include:

- (a) Capital and additional capital amounts used to maintain and increase investments;
- (b) Net operating profits including dividends and interest in proportion to their share-holdings;
- (c) Repayments of any loan including interest thereon, relating to the investment;
- (d) Payment of royalties and services fees relating to the investment;
- (e) Proceeds from sales of their shares;

(f) Proceeds received by investors in case of sale or partial sale or liquidation;

(g) The earnings of citizens/nationals of one Contracting Party who work in connection with investment in the territory of the other Contracting Party.

(2) Nothing in paragraph (l) of this Article shall affect the transfer of any compensation under Article 6 of this Agreement.

(3) Unless otherwise agreed to between the parties, currency transfer under paragraph (1) of this Article shall be permitted in the currency of the original Investment or any other convertible currency. Such transfer shall be made at the prevailing market rate of exchange on the date of transfer.

Article 8 Subrogation

Where one Contracting Party or its designated agency has guaranteed any indemnity against non-commercial risks in respect of an investment by any of its investors in the territory of the other Contracting Party and has made payment to such investors in respect of their claims under this Agreement, the other Contracting Party agrees that the first Contracting Party or its designated agency is entitled by virtue of subrogation to exercise the rights and assert the claims of those investors. The subrogated rights or claims shall not exceed the original rights or claim of such investors.

Article 9

Settlement of Disputes between an Investor and a Contracting Party

(1) Any dispute between an investor of one Contracting Party and the other Contracting Party in relation to an investment of the former under this Agreement shall, as far as possible, be settled amicably through negotiations between the parties to the dispute.

(2) Any such dispute which has not been amicably settled within a period of six months may, if both Parties agree, be submitted:

(a) for resolution, in accordance with the law of the Contracting Party which has admitted the investment to that Contracting Partys competent judicial, arbitral or administrative bodies; or

(b) to International conciliation under the Conciliation Rules of the United Nations Commission on International Trade Law.

(3) Should the Parties fail to agree on a dispute settlement procedure provided under paragraph (2) of this Article or where a dispute is referred to conciliation but conciliation proceedings are terminated other than by signing of a settlement agreement, the dispute may be referred to Arbitration. The Arbitration procedure shall be as follows:

(a) If the Contracting Party of the Investor and the other Contracting Party are both parties to the convention on the Settlement of Investment Disputes between States and nationals of other States, 1965 and the investor consents in writing to submit the dispute to the International Centre for the Settlement of Investment Disputes such a dispute shall be referred to the Centre; or

(b) If both parties to the dispute so agree, under the Additional Facility for the Administration of Conciliation, Arbitration and Fact-Finding proceedings; or

. to an ad hoc arbitral tribunal by either party to the dispute in

accordance with the Arbitration Rules of the United Nations Commission on International Trade Law, 1976, subject to the following modifications:

(i) The appointing authority under Article 7 of the Rules shall be the President, the Vice-President or the next senior Judge of the International Court of Justice, who is not a national of either Contracting Party. The third arbitrator shall not be a national of either Contracting party.

(ii) The parties shall appoint their respective arbitrators within two months.

(iii) The arbitral award shall be made in accordance with the provisions of this Agreement and shall be binding for the parties in dispute.

(iv) The arbitral tribunal shall state the basis of its decision and give reasons upon the request of either party.

Article 10

Disputes between the Contracting Parties

(1) Disputes between the Contracting Parties concerning the interpretation or application of this Agreement should, as far as possible, be settled through negotiation.

(2) If a dispute between the Contracting Parties cannot thus be settled within six months from the time the dispute arose, it shall upon the request of either Contracting Party be submitted to an arbitral tribunal.

(3) Such an arbitral tribunal shall be constituted for each individual case in the following way. Within two months of the receipt of the request for arbitration, each Contracting Party shall appoint one member of the tribunal. Those two members shall then select a national of a third State who on approval by the two Contracting Parties shall be appointed Chairman of the tribunal. The Chairman shall be appointed within two months from the date of appointment of the other two members.

(4) If within the periods specified in paragraph (3) of this Article the necessary appointments have not been made, either Contracting Party may, in the absence of any other agreement, invite the President of the International Court of Justice to make any necessary appointments. If the President is a national of either Contracting Party or if he is otherwise prevented from discharging the said function, the Vice President shall be invited to make the necessary appointments. If the Vice President is a national of either Contracting Party or if he too is prevented from discharging the said function, the Member of the International Court of Justice next in seniority who is not a national of either Contracting Party shall be invited to make the necessary appointments.

(5) The arbitral tribunal shall reach its decision by a majority of votes. Such decisions shall be binding on both Contracting Parties. Each Contracting Party shall bear the cost of its own member of the tribunal and of its representation in the arbitral proceedings; the cost of the Chairman and the remaining costs shall be borne in equal parts by the Contracting Parties. The tribunal may, however, in its decision direct that a higher proportion of costs shall be borne by one of the two Contracting Parties, and this award shall be binding on both Contracting Parties. The tribunal shall determine its own procedures.

Article 11

Entry and Sojourn of Personnel

A Contracting Party shall, subject to its laws applicable from time to

time relating to the entry and sojourn of non-citizens, permit natural persons of the other Contracting Party and personnel employed by companies of the other Contracting Party to enter and remain in its territory for the purpose of engaging in activities connected with investments.

Article 12 Applicable laws

(1) Except as otherwise provided in this Agreement, all investment shall be governed by the laws in force in the territory of the Contracting Party in which such investments are made.

(2) Notwithstanding paragraph (1) of this Article nothing in this Agreement precludes the host Contracting Party from taking action for the protection of its essential security interests or in circumstances of extreme emergency in accordance with its laws normally and reasonably applied on a non discriminatory basis.

Article 13 Application of other Rules

If the provisions of law of either Contracting Party or obligations under international law existing at present or established hereafter between the Contracting Parties in addition to the present Agreement contain rules, whether general or specific, entitling investments by investors of the other Contracting Party to a treatment more favourable than is provided for by the present Agreement, such rules shall to the extent that they are more favourable prevail over the present Agreement.

Article 14 Amendments and changes

The Contracting Parties may make amendments and changes to this Agreement by mutual consent. Such amendments and changes shall be made in the form of additional protocols which, upon entry into force in the manner prescribed in Article 15, shall constitute an integral and inseparable part of this Agreement.

Article 15 Entry into Force

The Agreement shall enter into force on the thirtieth day following the date of receipt of the later notification of fulfillment of their constitutional requirements for the entry into force of this Agreement by the Contracting Parties.

Article 16 Duration and Termination

(1) This Agreement shall remain in force for a period of ten years and thereafter it shall be deemed to have been automatically extended unless either Contracting Party gives to the other Contracting Party a written notice of its intention to terminate the Agreement. The Agreement shall stand terminated one year from the date on receipt of such written notice.

(2) Notwithstanding termination of this Agreement pursuant to paragraph (1) of this Article, the Agreement shall continue to be effective for a

further period of fifteen years from the date of its termination in respect of investments made or acquired before the date of termination of this Agreement.

In witness whereof the undersigned, duly authorized thereto by their respective Governments, have signed this Agreement.

Done at New Delhi, on May 23, 2003, in two originals each in the Armenian, Hindi and English languages, all texts being authentic.

In case of any divergence, the English text shall prevail.

The Agreement has entered into force on 30.05.2006.